# ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՃԵՐԻ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Ն. Ս.

*Միջանձնային հարաբերությունների կայունացումը, վստահության փոխըմբռնումն ու տարաբնույթ իրավիճակների համարժեք գնահատումը կախված են ոչ միայն անձնային տիպերի սոցիալական դրսևորման յուրահատկություններից՝, այլև բազմաթիվ միջանկյալ գործոններից ու անկախ փոփոխականներից, որոնց մեջ առաջին հերթին նկատի ունենք մտածողության ինտեգրատիվ ոճը:*

*Միջանձնային հարաբերությունների կտրվածքով դիտարկվող իմացական գործունեությունը կարող է մարդկանց մեջ առաջացնել որոշ աններդաշնակություն և որևէ գաղափարի շուրջ փոխադարձ անհամաձայնություն: Դրանով ավելի կուժեղանան տեղեկույթի փոխանցմանն անհրաժեշտ հակադիր, նույնիսկ իրարամերժ տարրերի բացասական ազդեցությունները, որոնք ցույց կտան միևնույն իրավիճակում մտածողության ոճերի համապատասխան տարբերությունները: Մտածողության տարբեր ոճերը շարունակում են պահպանել ներքին հակասությունները՝ իմացական գործունեության տարաբնույթ գործընթացներում: Դրանք այնպիսի հակասություններ են, որոնք կարող են վերաբերել մտածողության ոճերի դրսևորման առնվազն երեք բնագավառների՝*

*ա) տեղեկույթի որոնմանը, համապատասխան մեթոդների ընտրությանը, գործիքակազմի ու պայմանների հաստատմանը և այլն.*

*բ) տեղեկույթի պահպանմանը, նկատի ունենք ոչ միայն ուսումնական նյութի, այլև այն եղանակների, պայմանների ու միջոցների, որոնք անհրաժեշտ են ուսումնական կամ գիտական տեղեկույթի երկարատև պահպանման համար.*

*գ) տեղեկույթի հաղորդմանը՝ վերբալ կամ ոչ վերբալ արտահայտման եղանակներով:*

*Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ մտածողության որոշ ոճեր համադրելի են միևնույն իրավիճակում՝ նույնատիպ գործողությունների ընդգրկման տեսանկյունով: Այս իմաստով մտածողության վերլուծական ոճը համեմատելի է պրագմատիկ և ռեալիստական ոճերի հետ:*

*Ստորև համեմատական կարգով ներկայացնենք մի քանի ոճեր՝ ըստ հիմնական ռազմավարության, տվյալ ոճում ներառված ընդունակությունների*

---

[1] **Абульханова-Славская К.А.** Личностные типы мышления (Когнитивная психология , отв. ред. Ломов Б.Ф., М, 1986, с. 154-173); *նույնի*՝ Социальное мышление личности (Современная психология: состояние и перспективы исследований, ч. 3. Социальные представления и мышление личности, М., 2002, с. 88-103).

*և կարողությունների, տեղեկույթի հավաքման, պահպանման և ներկայացման գործընթացների:*

| Մտածողու-թյան ոճեր | Հիմնական ոգ-մավարություն | Հիմնական ընդունակություններ, կարողություններ | Տեղեկույթի հավաքում, պահպանում և ներկայացում |
|---|---|---|---|
| Վերլուծա-կան | Երևույթի մանրամասն և խոր ուսումնասիրման հակվածություն, տեսություններով կողմնորոշում | Իմացական գործունեության իրականացման լավագույն եղանակի որոնում | Տեղեկույթի հավաքում՝ կարգավորված, կանխատեսելի, արդյունավետ, հիմնավորված ձևով |
| Պրագմատիկ | Բոլոր ռեսուրսների օգտագործում և հնարավորությունների կիրառում՝ գործնական խնդիրներ լուծելիս | Գործնականում տվյալ անձի համար արդեն ստուգված գործողությունների համակարգ | Տեղեկույթի հավաքումը կատարվում է «իրականը և ճշմարիտը» համապատասխանեցնելով իմացության գործընթացին, գործունեության ճանաչողությանը, որին ուղղված գործողությունները տարբեր են իմաստով և չեն լրացնում միմյանց |
| Ռեալիստա-կան | Գործունեության հիմքում իրենց սեփական փորձն է, անմիջական տեսածը, զգացածը, լսածը | գործնական բնույթի առաջադրանքներում: հմտությունները, ինքնավստահությունն են ռեալիստ տիպին | Տեղեկույթը հավաքում են հիմնականում առօրյա կյանքի կամ էմպիրիկ փաստերի հիման վրա՝ շեշտը դնելով իրենց պրակտիկ գործողությունների վրա |

**Մտածողության որոշ ոճերի համեմատական բնութագրեր**

*Չնայած մտածողության ոճերը տարբերվում են միմյանցից վերը նշված մի քանի հատկանիշներով, այդուհանդերձ կարելի է առանձնացնել մի շարք գործողություններ, որոնք միաժամանակ կարող են ընդգրկվել մտածողության տարբեր ոճերում: Նկատի ունենք՝*

*ա) առարկայական կամ պրակտիկ գործողությունները.*

*բ) ըմբռնողական կամ մնեմիկական գործողությունները.*

*գ) մտավոր գործողությունները և այլն, որոնք միևնույն ոճում կարող են համատեղելի համարվել ու դրանով մտածողության ոճին տալ որոշակի երանգավորում: Նմանատիպ գծապատկեր կարելի է մշակել նաև այն ոճերի վերաբերյալ, որոնք վերաբերում են մասնագիտության ընտրությանը և մասնագիտական հետաքրքրություններին: Օրինակ՝ ըստ Գ. Ռեզապկինայի[2] և Օ. Ելիսեևի[3], որոնք վերլուծել են Ջ. Հոլլանդի թեստի արդյունքները, մարդկանց կարելի է դասակարգել տարբեր հատկանիշներով՝ կախված սոցիալ-մշակութային ազդեցությունից, կրթությունից, նշանավոր մարդկանց գնահատումից, որոնք անդրադառնում են տեղեկույթի որոնմանը, կուտակմանը, հետագա մշակմանը և հաղորդմանը:*

*Մտածողության տարբեր ոճերի համատեղելիության խնդիրը, ըստ էության, կարելի է բաժանել երկու մասի՝*

*ա) միևնույն անձի կողմից մտածողության երկու ոճերի համադրում.*

---

[2] **Резапкина Г.В.** *Секреты выбора профессии, М., 2003, с. 80.*

[3] **Елисеев О.П.** *Практикум по психологии личности, СПб., 2003, с. 386-389.*

բ) երկու անձերի համատեղ գործունեության մեջ մտածողության երկու ոճերի համադրում:

Էմպիրիկ բնույթի դիտարկումները ցույց են տալիս, որ խմբային գործունեության մեջ ավելի լավ են միմյանց հասկանում մտածողության միևնույն ոճ ունեցող անձինք[4]: Իհարկե, վիճահարույց է այն փաստը, որ մարդկային գործունեության արդյունավետությունը կարելի է բնորոշել միայն միմյանց հասկանալու իրողությամբ: Ամենաընդհանուր ձևակերպմամբ հասկանալու գաղափարը մտածողության ոճի պարագայում կարող է ստանալ որոշակի երանգավորում՝ կախված այն բանից, թե հասկանալը կոնկրետ ինչին է վերաբերում (նպատակին, գործողության կատարման եղանակին, տեղեկույթի պահպանմանը, անձնային հետաքրքրություններին և այլն): Գործողության օբյեկտիվ տեսանկյունով նմանություններ կարելի է փնտրել վերլուծական, ռեալիստական և պրագմատիկ մտածողության ոճերի միջև, քանի որ դրանք խոսում են փաստերի, փաստարկումների, ստուգված տեղեկույթների լեզվով: Մտածողության վերը նշված ոճերի հետ նպատակահարմար է քննարկել ձևափոխող մտածողության գաղափարը[5], որը հիմք կհանդիսանա համապատասխան ոճն առանձնացնելու և իմացական գործունեության մեջ կիրառելու համար: Շատ բան կախված է նրանից, թե մենք ինչպես ենք հասկա-նում մտածողության ուղղվածությունը՝նպատակի գիտակցման տեսանկյունով: Եթե մտածողությունը ծառայեցնենք միայն իրականության ճանաչմանը, ապա մարդու պրակտիկ գործունեությունը կսահմանափակվի միայն առարկաների ու նրա հատկանիշների ուսումնասիրմամբ[6]: Առարկայի և նրա հատկանիշների ճանաչողու-թյունը հնարավորությունների առումով չի կարող ավարտուն համարվել, եթե իմացական գործունեության մեջ չձևափոխվեն որոշ հատկանիշներ, պայմաններ, գործողության կատարման եղանակներ: Ձևափոխման իմաստը ոչ միայն իրականության ճանաչումն է այնպես՝ինչպես որ կա, այլև նրա այնպիսի ձևափոխումը, որը տարբեր իրավիճակներում կծառայի մարդու առկա պահանջմունքներին[7]: Ձևափոխող մտածողությունն առաջին հերթին անհրաժեշտ է մարդու գործունեության ձևափոխմանը, որը հանդես է գալիս որպես նրա կենսագործունեության պայման: Օբյեկտը, առարկան, միջոցը, նպատակը, պայմանը, գործոնները և հատկու թյունները, կառուցվածքային և գործառութային իմաստները մտածողության գործընթացում մշտապես ձևափոխվում են՝ հարմարեցնելով գործընթացների ուղղվա-

---

[4] **Анцыферова Л.И.** *Принцип связи сознания и деятельности и методология психологии ( Методологические и теоретические проблемы психологии, М., 1969, с. 57-117).*

[5] **Корнилов Ю. К.** *Преобразующая направленность как отличительная черта мышления (Мышление и общение: активное взаимодействие с миром. Сб. научных трудов, Ярославль, 1988, с. 3-6).*

[6] **Брушлинский А. В., Поликарпов В. А.**, *Мышление и общение (анализ через синтез в процессе диалогического решения задач), 2-е изд., Самара, 1999, с. 124.*

[7] **Брушлинский А.В**. *Мышление и прогнозирование, М., 1979, с. 230.*

*ծությանը և հետագա զարգացմանը[8]: Նոր մտքերի առաջացումը կապված է տվյալ իրավիճակից դուրս գալու ուղիների որոնման հետ: Ձևափոխող մտածողությունը, ըստ էության, ընդգրկում է տարբեր պարամետրերով ներկայացված գործնական և մտավոր գործողությունների տարաբնույթ ալգորիթմների վրա կառուցված ձևափոխությունների սխեմա, որը հնարավորություն է տալիս միևնույն միտքը կամ գաղափարը դիտարկելու տարաբնույթ մոտեցումներով՝ կրճատելով կամ ընդլայնելով գաղափարները, մտքերը, ենթադրում է վերադառնալ նույն մտքին կամ գաղափարին՝ տարբեր հարցադրումներով տրված պատասխանների սեղմամբ կամ ընդարձակմամբ[9]: Ձևափոխող մտածողության գաղափարն իրական կյանքում ենթադրում է տարբեր տեխնիկաների կիրառում, վարժանքների կազմակերպում, արդյունավետ մեթոդների որոնում և այլն: Գործնականում, հատկապես հումանիտար բնույթի հետազոտություններ կատարելիս, ավելի շատ շեշտը դրվում է հարցադրումների ձևակերպման վրա՝ նպատակ ունենալով փնտրել տվյալ հարցի կամ առաջադրանքի լուծման արդյունավետ եղանակներ կամ նոր հարցադրումների միջոցով ձևակերպել նոր գաղափարներ, մոտեցումներ: Այս ընդհանուր գաղափարը հիմք է տալիս առանձնացնել «ձևափոխող մտածողության ոճ» հասկացությունը՝ կապված իմացական խնդիրների բազմատարբերակային լուծման գործընթացի հետ: Ձևափոխող մտածողությունը հնարավորություն է տալիս նաև միևնույն խնդրի առաջադրումն ու դիտարկումն իրականացնելու տարբեր մակարդակներով՝ նաև ընդհանրացման մակարդակում: Ստորև ներկայացնենք ձևափոխող մտածողության մի քանի հնարքներ, որոնց կիրառմամբ փոխվում են մտածական գործընթացների արդյունքները, մտածողության ուղղվածությունը կամ իմացական գործունեության կառուցվածքագործառական բաղադրիչների նորովի ընկալումներն ու պարզաբանումները: Ձևափոխող մտածողությունը դիտարկենք մի քանի ուղղություններով.*

*ա) որպես սուբյեկտի իմացական գործունեություն՝ հարցադրմանն ուղղված հնարավոր լուծումների շտեմարանի առկայությամբ.*

*բ)իրականության այն հատվածի մասին տեղեկություններ, որոնց մեջ պիտի բացահայտվեն անհայտ հատկություններ, կապեր կամ օրինաչափություններ: Սա այն դաշտն է, որը վերաբերում է իրականության ընկալմանը, առանձին հատկանիշների շեշտադրմանը՝ ըստ իմացական պահանջմունքների բավարարման ջանքերի.*

*գ) իրականության տվյալ հատվածի և ձևափոխող մտածողության համապատասխանության պարզաբանում, որը թույլ է տալիս ժամանակ առ ժամանակ քննարկել առաջադրած հարցերի և դրանց պատասխանների համապատասխանությունը:*

---

[8] **Ломов. Б.Ф.** *Методологические и теоретические проблемы психологии, М., 1984, с. 444.*

[9] **Корнилов Ю. К**, նշվ. *աշխ., էջ 3-6:*

Թվարկվածները վերաբերում են ձևափոխող մտածողության ռազմավարական խնդրին, իսկ գործիքակազմի տեսանկյունով առաջնահերթությունը տրվում է հարցի ձևակերպումներին, որոնք կարող են արտահայտվել ինչպես ներքին (ներքին խոսք), այնպես էլ՝ արտաքին պլանով (ուրիշին ուղղված): Հարցի առաջադրումը ստանդարտ չէ, այն կարող է հանդես գալ՝

ա) մեկ հարցադրումը մեկ այլ հարցադրումով փոխարինելու անհրաժեշտությամբ.

բ) տարբեր հարցադրումների համադրման գործընթացով՝ նոր ձևակերպված հարցի տեսքով.

գ) համեմատական բնույթի հարցով. երբ անհրաժեշտություն է առաջանում գիտության տարբեր բնագավառներում ձևավորված խնդիրները համեմատել միմյանց հետ՝ լուծմանն անհրաժեշտ նոր բաղադրիչ բացահայտելու համար.

դ) պրակտիկայում շատ հայտնի հարցի կերպարանափոխմամբ՝ նպատակ ունենալով որևէ հարցի որոշ հարցադրումներ գլոբալացնելու կամ կրճատելու:

Վերոնշյալները չեն ենթադրում տվյալ հարցի շրջանակում նոր մեթոդաբանության մշակում, սակայն երբ անհրաժեշտ է լինում համոզվել այն բանում, որ հին մոտեցումները չեն կարող բացահայտել որևէ երևույթի էությունը, այդ դեպքում անհրաժեշտություն է զգացվում ձերբազատվել հին պատկերացումներից և անցնել նոր հարցադրումների՝ հստակ որոշելով հնարավոր կորստի չափը: Ձևափոխող մտածողությունը ստիպում է մարդուն հաճախակի դուրս գալ հիմնախնդրի շրջանակից, միացնել առաջադրանքի կամ խնդրի մոտեցումները, ծրագրերը:

Այսպիսով, հոգեբանության մեջ լայնորեն ընդունված մտածողության «վերլուծական», «պրագմատիկ», «ռեալիստական» ոճերի տեսանկյունով քննարկվում է դրանք բովանդակող հատկանիշները՝ ներառելով անձնային առանձնահատկությունները, սոցիալական իմացությունը: Ընդ որում, նշված ոճերն առանձին վերցրած փոփոխության են ենթարկվում՝ ըստ իրենց իմացության ռազմավարության, հիմնական ընդունակությունների, կարողությունների, տեղեկույթի հավաքագրման, պահպանման, ներկայացման և այլն: Իսկ նույնատիպ ոճեր կրող անձինք լավագույն ձևով են կարողանում համագործակցել՝ տարաբնույթ իմացական խնդիրներ լուծելիս:

## ОСОБЕННОСТИ СОВМЕСТИМОСТИ СТИЛЕЙ МЫШЛЕНИЯ

АХВЕРДЯН Н.С.

Резюме

Стабилизация межличностных отношений, равнозначная оценка различных ситуаций зависят не только от особенностей социального проявления личностных типов, но и от разных промежуточных факторов и независимых переменных, в числе которых в первую очвредь следует отметить стиль мышления.

Задачу совместимости разных стилей мышления по сути можно разделить на две составляющие: а) сопоставление двух стилей мышления одним и тем же лицом, б) сопоставление двух стилей мышления в совместной деятельности двух лиц.

Определенные стили мышления в одинаковой ситуации сопоставимы с точки зрения включения аналогичных действий. В этом смысле аналитический стиль мышления срав-ним с прагматичными и реалистичными стилями по а) основной стратегии, б) умениям и способностям в) процессам сбора, хранения и предоставления сведений. И хотя стили мышления отличаются друг от друга определенными особенностями, все же можно выделить предметные или практические, понятийные или мнемические, а также умственные действия, которые в одинаковом стиле могут считаться совместимыми и тем самым придать стилю мышления конкретную окраску.

Наряду с указанными стилями мышления целесообразно рассмотреть идею модифицирующего мышления, которая послужит основой для выделения соответствующего стиля и его применения в познавательной деятельности.

## PECULIARITIES OF THE COMPATIBILITY OF MENTALITY TYPES

N. HAKHVERDYAN

Abstract

Stabilization of interpersonal relations, as well an objective assessment of various situations, depend not only on the peculiarities of individual types of social behavior, but also on intermediate factors and independent variables, such as mentality types.

The problem of compatibility of different styles of mentality, in fact, comprises two parts the combination of two mentality styles on behalf of the same person ad the combination of two mentality styles in the joint activities of two sides.

Although mentality styles differ from each other in several features, it is still possible to distinguish practical or impractical, empathic or mnemonic, as well as mental activities, which may be considered to be compatible and thus convey an exact coloring to the respective style.